ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 31 >> հուլիսի 2017թ. N 48

ք. Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության 2017թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին >> N1313-Ն որոշումը.

որոշում եմ՝

1. *Հայաստանի Հանրապետության 2017 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին Տարրական ընդհանուր կրթության «Հատուկ կրթություն » ծրագրով տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով նախատեսված 97840000/ իննսունյոթ միլիոն ութ հարյուր քառասուն հազար / Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 96680200/իննսունվեց միլիոն վեց հարյուր ութսուն հազար երկու հարյուր / Հայաստանի Հանրապետության դրամ գումարը և Միջնակարգ ընդհանուր կրթության «Հատուկ կրթություն» ծրագրով տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով նախատեսված 142667100 /մեկ հարյուր քառասուներկու միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար մեկ հարյուր / Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 134744100/մեկ հարյուր երեսունչորս միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության թվով 2 /երկու/ հատուկ դպրոցներին աշակերտների թվերին համապատասխան վերաբաշխել համաձայն հավելվածի:*

2. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Փ.Կարապետյանին ՝ հատուկ կրթության ծրագրերով կնքել պայմանագրեր :*

3. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2017 թվականի դեկտեմբեր 31 -ի
N 48 որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

h/h	Դպրոցի անվանումը			
		09 01 02 03	09 02 01 04	Ընդամենը /հազար դրամ/
1	2	3	4	5
1	Արմավիրի թիվ 1 հատուկ /օժանդակ /դպրոց	36330.2	60982.9	**97313.1**
2	Վաղարշապատի թիվ 2 հատուկ /օժանդակ /դպրոց.	60350.0	73761.2	**134111.2**
	Ընդամենը	**96680.2**	**134744.1**	**231424.3**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ